ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2008-2012ԹԹ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ԵՐԵՎԱՆ - 2007

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ....3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4
ԳԼՈՒԽ I. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2003-2007 ԹԹ. 6
1.1 . Հայաստանում կոռուպցիայի մակարդակի գնահատականը, գերիշխող 6
տեսակները, բնագավառներն ու ոլորտները 6
1.2. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա միջոցառումների իրականացման 2003-2007 թթ. ծրագրի արդյունքները....7
1.3. Կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության ստանձնած 8
միջազգային պարտավորությունները....8
ԳԼՈՒԽ II. ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2008-2012 ԹԹ. 9
2.1. կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ, համակարգված քաղաքականությունը....9
2.2. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների 10
ծրագրի հիմնական սկզբունքները, նպատակներն ու ակնկալվող արդյունքները....10
2.3. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2008-2012 թթ. 12
միջոցառումների ծրագրի հիմնական (առաջնահերթ) ուղղություններն ու 12
խնդիրները 12
2.4. Հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմին կամ մարմիններ 15
ԳԼՈՒԽ III.ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ....16
3.1. Կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելման միջոցները 16
3.2. Կոռուպցիայի քրեականացումը և իրավապահ գործունեությունը 18
3.3. Կադրերի պատրաստումը և վերապատրաստումը, կոռուպցիայի մասին 18
տեղեկատվության կառավարումը 18
3.4. Կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության աջակցությունը....20
ԳԼՈՒԽ IV. ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՈՒ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ....22
4.1 . Գործադիր իշխանություն 22
4.2 . Օրենսդիր իշխանություն 23
4.3 . Տեղական ինքնակառավարման մարմիններ 23
4.4 . Դատական և դատախազական մարմիններ 23
4.5. Ֆինանսական հատված և առուդիտ....24
4.6. Քաղաքական հատված կամ քաղաքական կոռուպցիա 24
4.7. Մասնավոր հատված....24
ԳԼՈՒԽ V. ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ....25
ԳԼՈՒԽ VI. ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009-2012ԹԹ. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 28
ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԿԱՐԻՔՆԵՐՆ ԵՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ....29
ՀՀ հակակոռուպցիոն նոր ռազմավարության նախագծի մշակման աշխատանքների կազմակերպումը և նախապատրաստումը....29
ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի մշակման փորձագիտական խմբի կարիքները....30
ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2009-2012 ԹԹ.ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ....32

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ	*Ազգային ժողով*
ԱՀՌԾ	*Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր*
ՔԾԽ	*Քաղաքացիական ծառայության խորհուրդ*
ՀԱԱ	*Համախառն ազգային արդյունք*
ԿԸՀ	*Կոռուպցիայի ընկալման համաթիվ*
ԱՏԵՀՑ	*Անցումային տնտեսությամբ երկրների հակակոռուպցիոն ցանց*
ԲՀԻ	*Բաց հասարակության ինտիտուտ*
ԵԱՀԿ	*Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն*
ԵԽ	*Եվրոպայի խորհուրդ*
ԶԼՄ	*Զանգվածային լրատվության միջոցներ*
ՀԿ	*Հասարակական կազմակերպություն*
ՀՀ	*Հայաստանի Հանրապետություն*
ՀԲ	*Համաշխարհային բանկ (WB)*
ՀՌԻՄԾ	*Հակակոռուպցիոն ռազմավարություն և դրա իրականացման միջոցառումների ծրագիր*
ՄԱԶԾ	*Միացյալ ազգերի զարգացման ծրագիր*
ՖԴԿ	*ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոն*
ԱՄՊ	*Առևտրի միջազգային պալատ*
ՏՀԶԿ	*Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD)*
ԵՀՔ	*Եվրոպական հարևանության քաղաքականության (ENP)*
ԿԴՊՊԽ	*Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբ (GRECO)*
ՄԱԿԿԴԿ	*Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիա (UNCAC)*
ՄԶՆ	*Մեծ Բրիտանիայի միջազգային զարգացման նախարարություն (DFID)*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի սոցիալ-քաղաքական և տնտեսական նկարագիրը:

Այս բաժնում ցանկալի է ներկայացնել Հայաստանի տնտեսական, սոցիալական և քաղաքական համառոտ նկարագիրը, որը պատկերացում կտա կոռուպցիայի դեմ պայքարի, կոռուպցիայի նվազեցման գործում քաղաքական, սոցիալական և տնտեսական նախադրյալների ստեղծման, փաստացի իրավիճակի վերաբերյալ:

Հակակոռուպցիոն ռազմավարության և միջոցառումների ծրագրի մշակման մեթոդոլոգիան:

Նոր հակակոռուպցիոն ռազմավարությունը՝

- պետք է լինի հակակոռուպցիոն քայլերի, միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման համար պայմանների ստեղծման ու ապահովման նախադրյալ և երաշխավոր,
- այն պետք է ունենա վերջնական արդյունքներով գնահատվող ուղղվածություն, ինչը նշանակում է, որ կոնկրետ պետք է սահմանել կոռուպցիայի կրճատման սահմանանիշեր և այն քայլերը, որոնք կհանգեցնեն այդ սահմանված ցուցանիշներին հասնելուն,
- պետք է մշակվի քաղաքացիական հասարակության մասնակցային սկզբունքով, այլ ոչ թե նրան միայն տեղեկացնելու ճանապարհով,
- պետք է ունենա մոնիտորինգի, այդ թվում հասարակությանը հաշվետվողականության համակարգ, որի կազմակերպչականման համակարգը պետք է մշակվի ու դառնա ռազմավարական ծրագրի բաղկացուցիչ մաս,
- պետք է ունենա մշակման և կառավարման ճկուն ու հստակ համակարգ:

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մշակման ժամանակ որպես հիմնաղբյուրներ պետք է ընդունվեն այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են՝ ՀՀ կառավարության ծրագիրը, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը, ՀՀ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը, Եվրոպական նոր հարևանության քաղաքականության ծրագիրը, տվյալ բնագավառում տարվող բարեփոխումների քաղաքականությունը, արդյունավետ և ազնիվ (արդար) կառավարմանն ուղղված երկրի ջանքերը:

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի առաջարկվող միջոցառումներն ու քայլերի հաջորդականությունը համադրելի պետք է լինեն ՀՀ կողմից կոռուպցիայի դեմ պայքարում ստանձնած միջազգային պայմանագրերի, կոռուպցիայի դեմ պայքարում համագործակցության այնպիսի նախաձեռնությունների շրջանակում մշակված երաշխավորությունների պահանջներին, ինչպիսիք են կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (այսուհետ՝ *ԿԴՊՊԽ*) ու տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) անցումային տնտեսություններով երկրների Ստամբուլյան գործողությունների պլանով ստանձնած երաշխավորություններ-առաջարկություններն են:[1]

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի նախապատրաստման ժամանակ անհրաժեշտ է հիմք ընդունել ՀՀ գործող օրենսդրությունը, համապատասխան գերատեսչական փաստաթղթերը, միջազգային, մասնավորապես, կոռուպցիայի դեմ պայքարում մասնագիտացված կազմակերպությունների կողմից իրականացված ուսումնասիրությունների, հետազոտությունների, հարցումների ու զեկույցների տվյալները, ինչպես նաև ըստ անհրաժեշտության կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային լավագույն փորձի արդյունքները:

[1] Տ»ս սույն փաստաթղթի ՀՀ ստանձնած միջազ·ային պարտավորությունն»ր բաժինը

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մշակումը և նախապատրաստումը պետք է ընթանա մասնակցային գործընթացի սկզբունքով, ինչը նշանակում է որ ծրագրի մշակման աշխատանքներին հասարակությունը ի դեմս հասարակական կազմակերպությունների, մամուլի և զանգվածային այլ լրատվամիջոցների, քաղաքացիական նախաձեռնությունների և այլ շահագրգիռ կազմակերպությունների, պետք է իրենց մասնակցությունը բերեն ծրագրի համապատասխան առաջարկությունների մշակմանը, իսկ հետագայում՝ դրա իրականացմանը և մոնիթորինգին:

Փորձագիտական խումբը պետք է սերտ համագործակցի շահագրգիռ հասարակական կազմակերպությունների հետ՝ հիմք ընդունելով ռազմավարության մշակման պատասխանատու՝ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի հանձնաժողովի առաջարկությունները և նկատառումները:

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը պետք է ներառի 2008-2012 թթ. ժամանակահատվածը: Ժամկետները կվերաբերեն ծրագրի միջոցառումներին:

ՀՀ կառավարության ամենամյա գործունեության միջոցառումների ծրագրում անհրաժեշտ է ներառել 2008-2012թթ. ծրագրի համապատասխան հակակոռուպցիոն միջոցառումները կամ դրանց շարունակականությունը ապահովող գործողությունները, որով հնարավորություն կստեղծվի նոր ռազմավարությամբ սահմանված քաղաքականության իրականացման համար: Մյուս կողմից այս մեխանիզմը հնարավորություն կտա նախանշված միջոցառումների իրականացումը ապահովել բյուջետային միջոցներով և ամեն մի միջոցառման կատարման համար ունենալ կոնկրետ քաղաքական պատասխանատու մարմին:

ԳԼՈՒԽ I. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2003-2007 ԹԹ.

1.1 . Հայաստանում կոռուպցիայի մակարդակի գնահատականը, գերիշխող տեսակները, բնագավառներն ու ոլորտները

Հայաստանում կոռուպցիայի մակարդակի գնահատման նպատակով ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրում նպատակահարմար է օգտագործել առավել հանրահայտ և Հայաստանում օգտագործվող ցուցանիշների համակարգերը: Դրանց մեծ մասն այսօր օգտագործվում է ինչպես հակակոռուպցիոն ռազմավարության մշակման, երկրի ընդհանուր տնտեսական առաջընթացի նկարագրման, կառավարման արդյունավետության, այնպես էլ՝ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ապահովման, կոռուպցիայի կրճատման նպատակով ստանձնած երաշխավորությունների կատարումը գնահատելու համար:

Բացի կոռուպցիայի գնահատման միջազգային գնահատականներից (*«Թրանսփարենսի Ինթերնեշնլ»*[2], *Համաշխարհային Բանկի*[3], *«Ֆրիդոմ Հաուզ»*[4], *«Գելափ»*[5]*կազմակերպություններ*), անհրաժեշտ է տեքստի շարադրանքում անդրադառնալ Հայաստանում կոռուպցիայի գնահատման տեղական ներքին համակարգին՝ ցուցանիշներին, գործող վիճակագրությանը, ըստ բնագավառների և ոլորտների կոռուպցիայի գնահատման հարցումներին և ուսումնասիրություններին, այդ թվում մարդու իրավունքների պաշտպանի զեկույցին:

Այս բաժնում անհրաժեշտ է ներկայացնել նաև կոռուպցիայի գնահատման համակարգի «բացերը» և դրանց հաղթահարման ուղիները:

[2] http://www.transparency.org/policy_and_indices/cpi
[3] http://www.info.worldbank.org/governance/beeps
[4] http://www.freedomhouse.hu/nit.html
[5] http://www.galluppoll.com/content/?ci=25612&pg=1

1.2. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա միջոցառումների իրականացման 2003-2007 թթ. ծրագրի արդյունքները

Հակիրճ նկարագրել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2003-2007թթ. ծրագրի ընդհանուր դերակատարության, մոտեցումների, ուղղությունների, կոռուպցիայի դեմ պայքարի միջոցների վերաբերյալ կատարված աշխատանքը:

«ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարական ծրագիրն իր առաքելությունը 2003-2007 թթ. համար իրականացրեց, մասնավորապես, կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ բազմաթիվ օրենսդրական փաստաթղթերի ընդունման (50-ից ավելի օրենք և ենթաօրենսդրական փաստաթուղթ), ինստիտուցիոնալ նոր կառույցների ստեղծման, հակակոռուպցիոն պայքարի միջազգային կազմակերպություններին (ԵՄ-ի ԿԴՊՊԽ-ի և ՏՀԶԿ անցումային տնտեսության երկրների հակակոռուպցիոն պայքարի ցանց) անդամակցման, ինչպես նաև միջազգային համաձայնագրերին միացման գործում, (ԵՄ կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքացիական և քրեական կոնվենցիաների, ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիա) և այլն:»

Այս տեքստը հակիրճ օրինակ է՝ հետագա նյութի շարադրման համար:

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա միջոցառումների իրականացման 2003-2007թթ. ծրագրի արդյունքները շարադրելիս ցանկալի է հենվել ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստերում քննարկված նյութերի, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովի, նրա աշխատանքնային խմբերի կողմից ստեղծված նյութերի, հաշվետվությունների, հրապարակումների, ինչպես նաև հասարակական և միջազգային կազմակերպությունների կողմից իրականցված ուսումնասիրությունների և հետազոտությունների վրա:

Առանձին հարցաշարերով, ըստ միջոցառումների ու պատասխանատուների վերլուծել ՀՀ պետական համապատասխան կառավարման մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների կողմից ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների իրականացման վիճակը, ոչ միայն ըստ ժամկետների և ստեղծված օրենսդրական փաստաթղթերի, այլև ըստ միջոցառումների բովանդակության և ձեռք բերված արդյունքների: Մանրամասն վերլուծության ենթարկել միջոցառումների կիրառումից հետո տեղի ունեցած փոփոխությունները, ներկայացնել գործող «բացերը», նկարագրել կարիքներն ու պահանջները հակակոռուպցիոն միջոցառումների վերջնական արդյունքներին հասնելու համար:

Այնուհետև անհրաժեշտ է նկարագրել ՀՀ 2003-2007թթ. հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի այն «քաղած դասերը» և բաց թողնված հնարավորությունները, որոնք ունեցել են կամ կարող էին ունենալ էական ազդեցություն կոռուպցիայի կրճատման գործում: Ըստ նկարագրված «քաղած դասերի» և բացթողնված հնարավորությունների՝ վերլուծել կոռուպցիոն ռիսկերի առաջացման պատճառները:

Նշված գործընթացը պետք է իրականացվի ըստ ՀՀ 2003-2007թթ. հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի կառուցվածքային բաժինների և միջոցառումների: Մասնավորապես, բանկային, հարկային, մաքսային, կրթության, առողջապահության ոլորտներ, գործարար միջավայր, դատական համակարգ և այլն:

Վերլուծության մեջ անհրաժեշտ է ներառել նաև այն բաժիններն ու ոլորտները, որոնք բացակայում են հակակոռուպցիոն 2003-2007թթ. ռազմավարական ծրագրում: Ըստ այդ ոլորտների՝ ներկայացնել կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում իրականացված քայլերը, «քաղած դասերը» և բաց թողնված հնարավորությունները, վերլուծել դրանց առաջացման պատճառները:

1.3. Կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները

«2004 թ. հունվարին Հայաստանը դարձել է ԿԴՊՊԽ-ի անդամ6, իսկ 2004 թ. հունիսին և դեկտեմբերին՝ համապատասխանաբար ստորագրել և վավերացրել է Եվրոպայի խորհրդի «Քրեական իրավունքի մասին» և «Քաղաքացիական իրավունքի մասին» հակակոռուպցիոն կոնվենցիաները: Հայաստանը նաև ներգրավվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ)՝ նախկին խորհրդային 8 երկրի համար նախաձեռնած «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան» ծրագրում7:

Հայաստանի մասին ԿԴՊՊԽ -ի առաջին զեկույցն ընդունվել է 2006թ. մարտին: Այն ներառել է ՀՀ կառավարության կողմից հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետության գնահատման առաջին և երկրորդ փուլերի արդյունքները:

ՏՀԶԿ -ի «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլանը» ներառում է Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանը, Տաջիկստանը և Ուկրաինան: Այն կոչված է բարելավելու նշված երկրների հակակոռուպցիոն քաղաքականությունը միջազգային փորձագետների կողմից մշակված առաջարկությունների միջոցով: Հայաստանին վերաբերող առաջարկությունները մշակվել և ընդունվել են 2004թ. հունիսի 15-18-ին Փարիզում կայացած հանդիպման ժամանակ: 2006թ. դեկտեմբերին Փարիզում տեղի ունեցած ՏՀԶԿ -ի մոնիտորինգի 6-րդ հանդիպման ընթացքում քննարկվել է Հայաստանի առաջընթացը 2004թ. առաջարկությունների կատարման գործում և ընդունվել երկրի գնահատման (մոնիտորինգի) զեկույցը:8:

Եվրամիության եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում Եվրոպական միությունն ու Հայաստանը 2006թ. նոյեմբերին վավերացրել են գործողությունների ծրագիրը, որում կոռուպցիայի դեմ պայքարը ներառված է որպես գերակա ոլորտ9:

2005թ. մայիսին ՀՀ-ը ստորագրել է Միավորված ազգերի կազմակերպության «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիան (ՄԱԿԿԴԿ)10, որը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից. 2006թ. հոկտեմբերին: 2006թ. դեկտեմբերին Հորդանանում կայացած՝ ՄԱԿԿԴԿ-ը վավերացրած պետությունների առաջին հանդիպմանը որոշվել է սահմանել մոնիթորինգի մեխանիզմ, որը կպարունակի պարտադիր և կամավոր դրույթներ, ինչպես նաև հիմնել միջազգային հիմնադրամ իրավական գծով փորձագետների համար ու մշակել դատական և իրավապահ մարմինների կարողությունների զարգացման համաշխարհային ծրագիր:»

Նշված տեքստը օրինակ է հետագա նյութի շարադրանքի համար:

Կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային համապատասխան պայմանագրերով, համագործակցության նախաձեռնություններով Հայաստանի ստանձնած պարտավորությունների համառոտ բովանդակության նկարագրությունը, կատարված աշխատանքների գնահատականը, ըստ կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությունների և միջոցների: Կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային պայմանագրերով սահմանված պահանջների համապատասխանությունը Հայաստանում տիրող իրավիճակին, «բացերի» նկարագրությունը:

6 http://www.greco.coe.int
7 http://www.oecd.org/corruption/acn
8 http://www.oecd.org/document/35/0,2340,en_2649_34857_37846947_1_1_1_1,00.html
9 http://www.aeplac.am/pdf/enp_ap_arm.pdf
10 http://www.unodc.org/pdf/crime/convention_corruption/signing/Convention-e.pdf

ԳԼՈՒԽ II. ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2008-2012 ԹԹ.

2.1. կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ, համակարգված քաղաքականությունը

Ելնելով օրենքի գերակայության, պետական համակարգի և պետական գույքի պատշաճ կառավարման, ազնվության և անկաշառության, հանրության մասնակցության, հրապարակայնության, թափանցիկության և պատասխանատվության բարձրացման սկզբունքներից՝

- ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականությունը պետք է սահմանի և խրախուսի կոռուպցիայի կանխարգելմանն ու բացահայտմանն ուղղված (այդ թվում միջազգային) պրակտիկայում կիրառվող արդյունավետ տեսակները,
- նախանշվող քաղաքականությունը հնարավորություն պետք է ընձեռի կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի տեսանկյունից պարբերաբար գնահատել պետական մարմինների գործունեության արդյունավետությունը, պետական պաշտոնյաների հայեցողական լիազորությունների մակարդակը, ստուգումների ու հակակշիռների առկայությունը, համապատասխան իրավական ակտերը և վարչական միջոցները՝ դրանց համարժեքությունը,
- նոր քաղաքականությունը հնարավորություն պետք է ընձեռի ազատորեն համագործակցել համապատասխան միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ, ծավալել հասարակական երկխոսություն՝ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության միջև,
- նոր հակակոռուպցիոն քաղաքականությունը պետք է շեշտը դնի երկրորդ սերնդի բարեփոխումների շարունակականության ապահովման վրա, ամրապնդելով հակակոռուպցիոն հաստատությունների գործունեության կարողություններն ու ունակությունները
- հակակոռուպցիոն քաղաքականությունը պետք է խրախուսի մասնավոր հատվածին՝ շարունակելու կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրումը՝ կոռուպցիայի մասին հայտարարություններից անցնելու հակակոռուպցիոն գործուն միջոցների ձեռնարկմանը
- հակակոռուպցիոն նոր քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի անխուսափելի դարձնել կոռուպցիոն իրավախախտումների համար անձանց պատասխանատվությունը:

2.2. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի հիմնական սկզբունքները, նպատակներն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի հիմնական սկզբունքներն են՝

1. օրենքի առջև բոլորի հավասարությունը և օրենքի գերակայությունը,
2. պետական արդար կառավարման համակարգի արմատավորումը և գործունեության հրապարակայնությունը,
3. կոռուպցիայի մասին տեղեկատվություն փնտրելու, ստանալու, հրապարակելու և տարածելու ազատությունը, հանրության իրազեկվածությունը,
4. կոռուպցիոն երևույթների բացահայտման ու պատասխանատվության կիրառման անխուսափելիությունը,
5. հակակոռուպցիոն քաղաքականության անընդհատությունն ու շարունակականությունը:

Ծրագրի հիմնական նպատակն ու ակնկալվող արդյունքներ են՝

- կոռուպցիայի հակազդման արդյունավետ, համակարգված քաղաքականության իրականացումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մակարդակներում,
- հանրության մասնակցության ապահովումը պետական հակակոռուպցիոն քաղաքականության որոշումների կայացմանը,
- պետական ծառայողների ազնվության, անկաշառության ունակությունների զարգացումը,
- որոշումների կայացման գործընթացների թափանցիկության բարձրացումը
- քաղաքական որոշումներ կայացնողների հրապարակային գործունեության և պատասխանատվության մեծացումը,
- հակակոռուպցիոն օրենսդրության ներդաշնակեցումը միջազգային օրենսդրության պահանջներին,
- պետական մարմինների և ֆինանսների նկատմամբ վերահսկողության բարձրացումը,
- հասարակության կողմից պատժի անխուսափելիության գիտակցումը :

«ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի հիմնական նպատակը Հայաստանում կոռուպցիայի մակարդակի կրճատումն է, այն հաշվով, որ 2013թ. Հայաստանը ձեռբազատվի «համակարգային կոռուպցիայից» կամ դրա տարածվածության բարձր աստիճանից:

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի նպատակներից են ՀՀ հակակոռուպցիոն օրենսդրության և ենթակառուցվածքների համապատասխանեցումը Հայաստանի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներին, այդ թվում եվրոպական միության օրենսդրությանը, ինչպես նաև կոռուպցիաի տարածումը «կառավարելի» դարձնելը՝ կոռուպցիայի գնահատման և մոնիտորինգի սեփական ցուցանիշների համակարգի ձևավորումը:»

Նշված տեքստը մի փոքրիկ օրինակ է այս բաժնի շարադրանքի վերաբերյալ, որը պետք է ամփոփվի ռազմավարության մյուս համապատասխան գլուխների ձևավորումից հետո:

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի նպատակների և արդյունքների մշակման (շարադրման) ժամանակ նպատակահարմար է առաջնորդվել հետևյալ չափանիշներով՝

- դրանք պետք է լինեն իրատեսական և ամբողջական,
- լինեն կոնկրետ և առարկայական,
- չափելի, քանակապես և (կամ) որակապես գնահատելի:

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի նպատակներն ու արդյունքները պետք է միմյանց հետ շաղկապված լինեն ըստ ռազմավարության ծրագրի ուղղությունների, խնդիրների և միջոցառումների:

2.3. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2008-2012 թթ. միջոցառումների ծրագրի հիմնական (առաջնահերթ) ուղղություններն ու խնդիրները

Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի հիմնական ուղղություններ կարող են դիտարկվել[*]՝

1. **կոռուպցիայի կանխարգելումը**

   - ՀՀ հակակոռուպցիոն նոր քաղաքականության մշակումը,
   - օրենսդրական դաշտի կատարելագործումը,
   - կոռուպցիայի դեմ պայքարի և հակակոռուպցիոն քաղաքականության ինստիտուցիոնալ կառույցների կարողությունների զարգացումը,
   - հանրային միասնական ծառայության համակարգի ձևավորումը, վարքագծի կանոնների, շահերի բախման ինստիտուտը, եկամուտների և գույքի հայտարարագրման համակարգը, պետական ծառայողների վարձատրության համակարգը,
   - պետական գնումները, պետական ֆինանսները, աուդիտն ու վերահսկողությունը,
   - փողերի լվացման դեմ պայքարը,
   - պետական կառավարման համակարգի հաշվետվողականությունը.

2. **կոռուպցիայի քրեականացումը**

   - ՀՀ օրենսդրության մեջ կոռուպցիոն հանցագործությունների սահմանում և դրանց բովանդակության համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին,
   - համարժեք պատիժների սահմանում կոռուպցիոն հանցագործությունների համար,
   - իրավապահ մարմինների կարողությունների զարգացում,
   - կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ստացված եկամուտների և օգուտների բռնագրավում,
   - վաղեմության ժամկետներ,
   - հանցակցություն և պարտակում.

3. **քաղաքացիական հասարակության ներգրավումը կոռուպցիայի դեմ պայքարում, նրա հետ համագործակցության զարգացումը**

   - քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի խրախուսում,
   - քաղաքացիական հասարակության համար տեղեկացվածության մատչելիության բարձրացում,
   - քաղաքացիական հասարակության կողմից վերահսկողության ընդլայնում,
   - քաղաքացիական հասարակության հետ երկխոսության զարգացման այլ ուղիների ստեղվում.

---

[*] Ն»րքոհիշյալ հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական ուղղությունն»րի առաջնահ»րթությունն»ը փաստաթղթի հ»ղինակն»րի կողմից ն»րկայացված առաջարկությունն»ր »ն և կարող »ն փոփոխության »նթարկվ»լ կոռուպցիայի դ»մ պայքարի խորհրդի և ՀՀ կառավարության կողմից հաստատման ժամանակ:

4. **բնակչության շրջանում հակակոռուպցիոն կրթալուսավորչական գործունեության ծավալումը**

   - բնակչության մոտ կոռուպցիայի բացասական հետևանքների ընկալման մակարդակի բարձրացում,
   - կոռուպցիոն հնարավոր դեպքերի մասին տեղեկատվության հավաքագրման մեթոդների և տեխնիկայի զարգացում,
   - կառավարության գործունեության թափանցիկության մակարդակի բարձրացում՝ էլեկտրոնային միջոցներով.

5. **մասնավոր հատվածում կոռուպցիայի կրճատմանն ուղղված կոնկրետ քայլերի մշակումը.**

6. **հակակոռուպցիոն պայքարի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը.**

7. **միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների իրականացումը.**

8. **կոռուպցիայի դեմ պայքարի մոնիտորինգի ու գնահատման համակարգի ձևավորումը և զարգացումը:**

Ըստ ռազմավարության ուղղությունների՝ անհրաժեշտ է նկարագրել նաև այն հիմնական անելիքները, որոնք Հայաստանի համար խնդիրներ են: Դասակարգել կոռուպցիայի դեմ պայքարում ռազմավարության ծրագրում ընդգրկվելիք այն միջոցառումները, որոնք պետք է համապատասխանեն Հայաստանի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներին:

Ըստ առաջնահերթությունների՝ առանձնացնել այն քայլերն ու գործողությունները, որոնք կարիք ունեն առաջին փուլում ներդրման: Առաջնահերթությունների սահմանման ժամանակ հաշվի առնել ՀՀ կառավարության կողմից տվյալ ոլորտում իրականացվող բարեփոխումների ընթացքն ու քայլերը:

Որպես առանձին հատված՝ ցանկալի է ունենալ նաև առաջարկություններ կոռուպցիայի դեմ պայքարում այլ միջազգային կառույցներին անդամակցության, համագործակցության նոր շրջանակների սահմանման վերաբերյալ:

«ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի հիմնական ուղղություններց կարևորվում է՝

- ***ՀՀ հակակոռուպցիոն նոր քաղաքականության մշակումը**, պայքարի նոր ուղղությունների նախանշումը, հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման ամենամյա ծրագրերի մշակումը, դրանց մոնիթորինգը և գնահատումը, նախանշված արդյունքներին հասնելու ուղիների ճշգրտումը, կոռուպցիոն դրսևորումների բացահայտման մեթոդների և միջոցների սահմանումը և այլն.*

- ***կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ կառույցների կարողությունների զարգացումը** կոռուպցիաի դեմ պայքարի խորհրդի, հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնաժողովի կարողությունների զարգացում, հակակոռուպցիոն նոր ռազմավարության և ծրագրի իրականացման պատասխանատու մարմնի սահմանում, դրա գործառույթների և խնդիրների շրջանակի որոշում.*

- ***բնակչության շրջանում կրթալուսավորչական քաղաքականության իրականացումը**, պետական կառավարման մարմինների կողմից հակակոռուպցիոն պայքարի քարոզարշավների կազմակերպումը, կրթական համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի թեմատիկայի ներառումը՝ որպես դասավանդման առարկա, պետական ծառայողների վերապատրաստման պարտադիր դասընթացներում այս թեմատիկայի ներառումը և այլն.*

- ***համագործակցությունը քաղաքացիական հասարակության շահագրգիռ միավորումների և կազմակերպությունների հետ** քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացների*

զարգացումը, կոռուպցիայի դեմ պայքարի մասնակցային գործընթացում մոնիթորինգի համակարգի ներդրումը, կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացումը, դրանց կրթման և վերապատրաստման գործընթացի կանոնակարգումը, համագործակցությանն ուղղված միջոցառումների մշակումը:

- ***կոռուպցիայի քրեականացումը,*** *ՀՀ օրենսդրության մեջ կոռուպցիոն իրավախախտումների սահմանումների և բովանդակության համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության սահմանումը և այլն,:*

- ***պետական միասնական ծառայության համակարգի ձևավորումը****, պետական ծառայողների համար եվրոպական միասնական էթիկայի կանոնների կիրառումը, մասնագիտական ծառայությունների համար էթիկայի առանձին կանոնակարգերի ընդունումը: Պետական ծառայողների էթիկայի կանոնների, եկամուտների հայտարարագրման, գույքի և պարտավորությունների չկատարման, այլ խախտումների համար խիստ կարգապահական պատիժների սահմանումը, ինչպես նաև պետական ծառայողների էթիկայի կանոնների, շահերի բախման, ֆինանսական հաշվետվությունները վերահսկող պատասխանատու կառույցների կարողությունների զարգացումը,:*

- ***փողերի լվացման դեմ պայքարի*** *օրենսդրության բարելավումը, դրա համապատասխանեցումը միջազգային պահանջներին: ՀՀ կենտրոնական բանկում ձևավորված ֆինանսական հսկողության կենտրոնի կարողությունների զարգացում: Կենտրոնի գործունեության արդյունքներով ՀՀ իրավապահ մարմիններին ներկայացված զեկույցների և կասկածելի գործարքների վերաբերյալ դեպքերի առավելագույն բացահայտում:*

- ***ֆինանսական հսկողության, աուդիտի*** *և «փողերի լվացման» դեմ պայքարի կազմակերպությունների կայացվածության, նրանց համագործակցության և գործունեության նպատակաուղղվածության բարելավվում կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված այլ կառույցների հետ:*

ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարական ծրագրի կարևորագույն ուղղություններից է մոնիթորինգի ու գնահատման համակարգի ձևավորումը:»:

Նշվածը այս բաժնին վերաբերող օրինակ է, որի շարադրանքն ըստ հակակոռուպցիոն ռազմավարության ուղղությունների պետք է շաղկապվի այդ ուղղությանը բնորոշ խնդիրներին: Խնդիրների կարևորությունը և առաջնահերթությունը իրենց հերթին պետք է բխեն ռազմավարության ծրագրի առաջին գլխի վերլուծության արդյունքներից, ինչպես նաև չորրորդ գլխում առաջնահերթ ճանաչված ոլորտային խնդիրներից: Դրանք միաժամանակ պետք է բխեն հակակոռուպցիոն համագործակցության միջազգային կոնվենցիաներով ՀՀ ստանձնած պարտավորություններից:

2.4. Հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմին կամ մարմիններ

Հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմինների ստեղծման, ձևավորման, վերակազմավորման վերաբերյալ առաջարկությունները ձևակերպելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել Հայաստանում նախորդ տարիներին իրականացված փորձը, ներկայացնել դրական և թույլ կողմերը, նոր մարմնի կամ մարմինների ստեղծման հնարավորությունները, ինչպես լրացուցիչ ծախսերի համադրման, այնպես էլ դրանց կողմից իրականացվելիք գործառույթների, կարողությունների զարգացման, ինչպես նաև քաղաքացիների տեսանկյունից:

ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականություն մշակող և իրականացնող մարմինների անհրաժեշտության հիմնավորումը, տարբերակների առաջադրումը պետք է ներառեն կոռուպցիայի կանխարգելման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են՝

ա) հակակոռուպցիոն քաղաքականության մշակում և այդ քաղաքականության իրականացումը, հսկողությունը և համակարգումը,

բ) կոռուպցիայի կանխարգելման հարցերով հասարակության գիտելիքների ընդլայնումն ու տարածումը,

գ) օրենսդրության եւ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության իրականացումը, կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ եզրակացությունների նախապատրաստումը:

Այդ մարմինը կամ մարմիններն իրենց գործառույթներն արդյունավետ և անհարկի ազդեցությունից զերծ պահելու համար պետք է օժտված լինեն ինքնուրույնությամբ, ունենան անհրաժեշտ նյութական պաշարներ և մասնագիտացված անձնակազմ, ինչպես նաև անձնակազմի այնպիսի որակավորում, որոնք կհամապատասխանեն այդ գործառույթների իրականացմանը:

ԳԼՈՒԽ III.ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

3.1. Կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելման միջոցները

Այս բաժնում ներկայացված հարցերի շրջանակը պետք է կողմնորոշի փորձագետներին՝ նկարագրելու և քննարկելու կոռուպցիայի կանխարգելման միջոցների կիրառման գործում առկա բացերը, ներկայացնելու առաջարկություններ կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ:

Հանրային կառավարում

- կառավարման մարմինների գործառույթների հստակեցում, կշիռների և հակակշիռների սկզբունքների սահմանում,
- պետական և համայնքային ծառայողների, ոչ ընտրովի այլ պաշտոնատար անձանց աշխատանքի ընդունման, հավաքագրման, ծառայության անցնելու, ծառայողական առաջխաղացման պաշտոնաթողության համակարգերի քննարկում՝ հիմնված ըստ արժանիքների, արդարության և մասնագիտական ունակությունների չափանիշների և գործունեության արդյունավետության ու թափանցիկության սկզբունքների վրա,
- կոռուպցիայի տեսանկյունից խոցելի պաշտոններում, կադրերի ընտրության և նախապատրաստման ընթացակարգերի քննարկում,
- պետական և համայնքային ծառայողների, ինչպես նաև ոչ ընտրովի այլ պաշտոնատար անձանց վարձատրության համակարգերի ուսումնասիրություն,
- պետական և համայնքային ծառայությամբ պայմանավորված գործառույթների իրականացման տեսանկյունից կադրերի պատրաստման, մասնագիտական վերապատրաստման համակարգերը, մասնավորապես իրենց աշխատանքային գործառույթներով պայմանավորված կոռուպցիայի հետ կապված ռիսկերի վերաբերյալ կրթական ու ուսումնական ծրագրերի ու վերապատրաստման դասընթացների կազմակերպումը,
- պետական պաշտոններում թեկնածուների և ընտրության չափանիշների սահմանումը,
- ընտրովի պետական պաշտոններում թեկնածուների ֆինանսավորման, քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության քննարկում,
- շահերի բախման կանխարգելման համակարգերի ստեղծման ուսումնասիրում:

Հանրային ծառայողների վարքագծի կանոններ

- պետական գործառույթների ճշգրիտ, բարեխիղճ և պատշաճ իրականացման համար վարքագծի կանոնագրքերի և ստանդարտների կիրառում,
- գործառույթների իրականացման ժամանակ հայտնի դարձած կոռուպցիոն դեպքերի մասին պաշտոնաբար անձանց կողմից համապատասխան իրավասու մարմիններին հայտնելու ինստիտուտը,
- պաշտոնատար անձանց արտածառայողական գործունեության, զբաղմունքի, ներդրումների, ակտիվների և էական նվիրատվությունների կամ օգուտների մասին հայտարարագրման համակարգը,
- սահմանված վարքագծի կանոնների կամ ստանդարտների խախտումների համար պաշտոնատար անձանց նկատմամբ կարգապահական կամ այլ միջոցներ կիրառելու հնարավորությունը:

Հանրային գնումներ

- գնումների ընթացակարգեր և գնումների պայմանագրեր, դրանց մասին տեղեկատվության հրապարակային տարածում,
- ներքին վերահսկողության՝ ներառյալ բողոքարկման արդյունավետ համակարգերը, գնումների համար պատասխանատվություն կրող անձնակազմին վերաբերող հարցերի

կարգավորումը, հրապարակային գնումներով շահագրգռված լինելու՝ հայտարարագրման, ստուգման ընթացակարգերը և դրանց նկատմամբ պահանջները:

Հանրային ֆինանսների կառավարում

- հանրային ֆինանսների կառավարման ուղղությամբ ազգային բյուջեի ընդունման ընթացակարգերը, մուտքերի և ծախսերի մասին ժամանակին զեկուցումը, հաշվապահական հաշվառման ստանդարտների համակարգը և ստուգման ու դրա հետ կապված հսկողության համակարգը, ռիսկերի և ներքին վերահսկողության կառավարման արդյունավետ և ներգործուն համակարգերը, պետական ծախսերին և եկամուտներին վերաբերող հաշվապահական գրքերի, գրանցումների, ֆինանսական տեղեկագրերի և այլ փաստաթղթերի պահպանումը,այդպիսի փաստաթղթերի կեղծմանը հակազդող միջոցները:

Հրապարակային հաշվետվություն

- ընթացակարգեր կամ կանոնակարգեր, որոնք բնակչությանը թույլ կտան, տեղեկատվություն ստանալ պետական կառավարման մարմինների կազմակերպման, գործունեության և որոշումների ընդունման գործընթացների մասին,
- որոշումներ ընդունող իրավասու մարմինների հետ հանրության կապը հեշտացնող վարչական ընթացակարգերի հստակեցում:

Կանխարգելման միջոցները մասնավոր հատվածում

- մասնավոր հատվածում կոռուպցիայի կանխարգելման, հաշվապահական հաշվառման ստանդարտների և աուդիտի ուժեղացում, այդպիսի պահանջների չպահպանման համար քաղաքացիաիրավական, վարչական կամ քրեական պատժամիջոցների սահմանում,
- իրավապահ մարմինների և մասնավոր կազմակերպությունների միջև համագործակցության հաստատում,
- մասնավոր կազմակերպությունների աշխատանքում բարեխղճության ապահովման համար ստանդարտների և ընթացակարգերի մշակում, ներառյալ ձեռնարկատերերի և բոլոր մյուս մասնագիտությունների ներկայացուցիչների համար գործունեության բարեխիղճ և պատշաճ իրականացման վարքագծի կանոնագրքերը և շահերի բախումների առաջացման կանխարգելում,
- առևտրային կազմակերպությունների միջև, ինչպես նաև նրանց ու պետության միջև պայմանագրային հարաբերություններում բարեխիղճ առևտրային պրակտիկայի կիրառում:

Փողերի լվացման կանխարգելման միջոցներ

- փողերի լվացման դեմ պայքարելու համար կոչված վարչական, կարգավորող, իրավապահ և մյուս մարմիններն ընդունակ լինեն ներքին օրենսդրությամբ սահմանված պայմաններով ազգային և միջազգային մակարդակներում համագործակցություն իրականացնել և տեղեկատվություն փոխանակել,
- ֆինանսական օպերատիվ տեղեկատվության գծով ստորաբաժանման գոյությունը՝ որպես փողերի լվացման հնարավոր դեպքերին առնչվող տեղեկությունների հավաքման, վերլուծության և տարածման ազգային կենտրոն,
- կանխիկ դրամական միջոցների և համապատասխան շրջանառու գործիքների փոխանցումները բացահայտելու և այդպիսի փոխանցումները վերահսկելու ուղղությամբ պրակտիկ հնարավոր միջոցների կիրառման հարցը, այն հաշվով, որ ֆիզիկական և իրավաբանական անձիք հայտնեն նշանակալից ծավալների կանխիկ դրամական միջոցների անդրսահմանային փոխանցումների և համապատասխան շրջանառու գործիքների հանձնման մասին:
- ֆինանսական կազմակերպություններից, այդ թվում՝ դրամական միջոցներ փոխանցողներից տեղեկատվության ստացում:

3.2. Կոռուպցիայի քրեականացումը և իրավապահ գործունեությունը

Անհրաժեշտ է բացահայտել կոռուպցիայի քրեականացման հասկացությունը, տարանջատել ըստ բաժինների (բացահայտում, պատիժ, հետևանքների վերացում), վերլուծել և համադրել ՀՀ օրենսդրության հետ, նկարագրել բացերը և ներկայացնել առաջարկություններ կոռուպցիայի բացահայտման միջոցների կատարելագործման վերաբերյալ:

Այս բաժնի համար, որպես ենթաբաժիններ կարող է ծառայել հետևալ հարցերի շրջանակը՝

- ազդեցության չարաշահումը և ազդեցության առևտուր
- կոռուպցիոն հանցագործությունների սահմանումը
- կաշառքը մասնավոր հատվածում
- պարտակելը
- իրավաբանական անձանց պատասխանատվության ինստիտուտի ներդրում
- վաղեմության համարժեք ժամկետներ
- կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ստացված եկամուտներ բռնագրավում
- վկաների, փորձագետների և տուժողների պաշտպանություն
- տեղեկատվություն հայտնող անձանց պաշտպանություն
- վնասը հատուցելը
- մասնագիտացած իրավապահ մարմինները
- համագործակցությունն իրավապահ մարմինների (դատախազություն, ոստիկանություն, հարկային, մաքսային և այլ ծառայություններ) միջև
- համագործակցությունն իրավապահ մարմինների և մասնավոր հատվածի միջև
- ակտիվների վերադարձը

Այս բաժնում պետք է դիտարկել նաև քրեաիրավական հարցերով միջազգային համագործակցությունը, այդ թվում՝

- հանձնումը
- դատապարտված անձանց փոխանցելը
- փոխադարձ իրավական օգնությունը
- քրեական վարույթի փոխանցումը
- համագործակցությունը իրավապահ մարմինների միջև
- համատեղ քննությունները
- քննության հատուկ մեթոդները

3.3. Կադրերի պատրաստումը և վերապատրաստումը, կոռուպցիայի մասին տեղեկատվության կառավարումը

Կադրերի պատրաստումը և տեխնիկական օգնությունը

Այս բաժնում պետք է նկարագրվեն կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման գործում ներգրավված մարմինների աշխատակազմերի աշխատակիցների պատրաստման և վերապատրաստման հարցերը, մասնավորապես ուսումնասիրվեն կադրերի պատրաստման և վերապատրաստման ծրագրերի կարիքները, արդիական թեմաները: Միաժամանակ պետք է գնահատվեն այդ մարմինների կարողությունները, ինչպես տեխնիկական միջոցների առկայության, այնպես էլ տեխնիկական օգնություն ստանալու գործում համապատասխան ծրագրերի նախագծեր մշակելու ունակությունները:

Առանձին քննարկման հարց պետք է դառնա հակակոռուպցիոն քաղաքականության և ռազմավարության մշակման ու պլանավորման կարողությունների գնահատումը, դրա ինստիտուցիոնալիզացիան: Կադրերի վերապատրաստման թեմատիկաների շարքում պետք է կարևորվեն այդ մարմինների աշխատակիցներին օտար լեզուների ուսուցումը, կոռուպցիոն արարքների կանխարգելման, բացահայտման և քննության, դրանց համար պատիժների սահմանման, կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ արդյունավետ միջոցների, այդ թվում՝ ապացույցների հավաքման և քննության մեթոդների վերաբերյալ կարողությունների զարգացումը:

Իրավասու մարմիններում և հասարակության մասնակցությամբ կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության և միջոցառումների պլանների մշակման նպատակով կոռուպցիայի տեսակներին, պատճառներին, հետևանքներին և ծախսերին վերաբերող առանձին հետազոտությունների, հարցումների, գնահատումների, մշակումների և ուսումնասիրությունների անցկացման և իրականացման կարողությունների զարգացումը:

Վերը նշված բոլոր հարցադրումների շրջանակում պետք է գնահատվեն տեխնիկական օժանդակության պահանջները, դրանց բավարարման աղբյուրները, համագործակցության ուղիները:

Կոռուպցիայի մասին տեղեկատվության հավաքումը, փոխանակումը և վերլուծությունը

Փորձագետները պետք է վերլուծեն կոռուպցիայի մասին տեղեկատվության հավաքագրման փոխանակման և վերլուծության գործող համակարգը, նկարագրեն բացերն ու առաջադրեն կոռուպցիայի բնագավառում միտումները, վերլուծության պայմանները, գործիքները և մեխանիզմները, քննարկեն կոռուպցիային վերաբերող տեղեկատվության հավաքագրման, վիճակագրության, կոռուպցիայի սահմանումների, ստանդարտների և մեթոդաբանության մշակման հարցը:

Փորձագետները պետք է քննարկեն և ներակայացնեն առաջարկություններ կոռուպցիայի վիճակագրության, դրա վերաբերյալ համապատասխան մասնագետների և կառույցների տեղեկացվածության և գիտելիքների ընդլայնման հնարավորությունները, մասնավորապես, կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի գորոծում կոռուպցիայի վերաբերյալ տվյալների փոխանակման հնարավորությունները կոռուպցիայի դեմ պայքարի առանձին մարմինների միջև, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ: Միաժամանակ պետք է անդրադառնալ հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմիններին կոռուպցիայի գնահատման, դրա դեմ պայքարի, կանխարգելման գործում տեղեկատվության ապահովման խնդիրներին:

Այս բոլոր ասպեկտները հնարավորություն պետք է տան ունենալու կոռուպցիայի գնահատման համակարգված ցուցանիշների և վիճակագրական համակարգ:

3.4. Կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության աջակցությունը

Քաղաքացիական հասարակության մասնակցությունը

